



Արմբրոկ Երևան Մարաթոն միջոցառման կանոնակարգ

Ապրիլի 28, 2024

Երևան, Հայաստան

www.armeniamarathon.org, info@armeniamarathon.org

1. Կազմակերպիչներ:

- «Արմ Մարաթոն» մարզակրթական հիմնադրամ
- Երևանի քաղաքապետարան,
- TriClub Yerevan սպորտային ակումբ

2. Վազքուղի, մեկնարկ, ավարտ

- Մեկնարկի օր և ժամ՝ ապրիլի 28, 2024, 8:00 Երևանի ժամանակով:
- Մեկնարկի վայր՝ Շահումյան հարապարակ, Երևան, Հայաստան: Ավարտի և մեկնարկի վայրերը համընկնում են:
- 42,2կմ և 21,1 կմ վազքատարածքի մրցուղին անցնում է Երևանի կենտրոնական փողոցներով և Հրազդան գետի կիրճով:
- Սահմանված մրցատարածություններ՝ 42,2կմ, 21,1կմ, 12կմ, 5կմ և մանկական վազք՝ 1 կմ:
- Վազքատարածքի հաղթահարման սահմանված ժամանակ՝ 6 ժամ 42,2կմ վազքի համար և 3 ժամ 30 րոպե 21,1կմ վազքի համար:

3. Մասնակիցներ

- Երևանի Մարաթոն մրցմանը կարող են մասնակցել.
 - 42.2 կմ՝ 18 տարեկան և ավելի մեծ մասնակիցներ
 - 21.1 կմ՝ 18 տարեկան և ավելի մեծ մասնակիցներ
 - 12 կմ՝ 16 տարեկան և ավելի մեծ մասնակիցներ
 - 5 կմ՝ 13 տարեկան և ավելի մեծ մասնակիցներ
 - 1 կմ՝ երեխաներ՝ մինչև 12 տարեկան, 7 տարեկանից փոքր երեխաները պետք է վազեն ծնողի ուղեկցությամբ
- Վազքի մասնակցության և տարիքային խմբերում ընդգրկվելու համար մասնակցի տարիքը որոշվում է 2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ:
- Մեկնարկային փաթեթները ստանալիս՝ մասնակիցը ստորագրում է համաձայնագիր, ըստ որի կազմակերպիչներն ամբողջովին գերծ են մնում միջոցառման (մրցավազքի) ժամանակ մասնակցի առողջությանը հասցված հնարավոր վնասի պատասխանատվությունից: Անչափահաս երեխաների մասնակցության համար դիմումը ստորագրում է ծնողներից մեկը:
- Մասնակիցների քանակը սահմանափակ է՝ մինչև 2500 հոգի:

4. Գրանցում

- Մասնակցության համար անհրաժեշտ է լրացնել հայտ մրցույթի www.armeniamarathon.org կայքում:

- Գրանցումն ավարտվում է 2024 թ ապրիլի 27-ին, կամ ավելի վաղ՝ մասնակիցների քանակը լրանալուն պես:
- Գրանցված է համարվում այն մասնակիցը, ով լրացրել է հայտն ու վճարել մասնակցության վճարը:
- Այն մասնակիցները, որոնք 2023-2024թ գրանցել են 42,2կմ մրցույթի արդյունք 2:30 կամ ավելի արագ արդյունքում, 21.1 կմ վազքատարածքում 01:15:00 կամ ավելի արագ արդյունք, կամ 10 կմ վազքատարածքում 35 րոպեից արագ արդյունք, գրանցվում են ընդհանուր կարգով և հաղորդագրություն են ուղարկում կազմակերպիչներին info@armeniamarathon.org հասցեով, մարտի 8-ից ոչ ուշ, մեկնարկի առաջնային հատվածում ընդգրկվելու համար:

5. Գրանցման գործընթացը

- Մասնակիցը առցանց www.armeniamarathon.org էջում լրացնում է մասնակցության հայտը և այնուհետև կատարում առցանց վճարում կամ կանխիկ բանկային մասնաճյուղում (տես կետ 8):
- Հայտը լրացնելուց հետո մասնակիցը էլ.փոստով ստանում է հայտի հաստատումը:
- Վճարումը հաստատելուց հետո մարզիկը ներառվում է մասնակիցների ցուցակի մեջ:

6. Վերագրանցում

- Մեկնարկային համարը չի թույլատրվում փոխանցել այլ մասնակցի:

7. Մեկնարկային համարների տրամադրում

- Մեկնարկային համարներ տրվում են մրցավազքի նախորդ շաբաթվա ընթացքում: Մասնակիցը պետք է վազի իր համարով: Մեկնարկային համարն այլ անձի փոխանցման դեպքում վազորդի արդյունքը չեղյալ է համարվում:

8. Մասնակցության վճար

- Գրանցման հայտը առցանց լրացնելուց անհրաժեշտ է կատարել վճարում: Վճարումը կարելի է կատարել առցանց Visa կամ MasterCard քարտերով:
- Վճարումը կարելի կատարել նաև կանխիկ եղանակով Կոնվերս բանկի մասնաճյուղերում,
- Գրանցման արժեքը հետևյալն է.

ՀՀ դրամ	Խումբ 1 (մրցատարածության առաջին 50 գրանցվողներ)	Խումբ 2 (մրցատարածության 51-100 գրանցվողներ)	Խումբ 3 (մրցատարածության 101-300 գրանցվողներ)	Խումբ 4 (301-րդ գրանցվողից սկսած, ինչպես նաև ապրիլի 22-ից հետո գրանցվողներ)	Նշումներ
42,2կմ	14,000	16,000	18,000	20,000	Ներառում է վերնաշապիկ
21,1կմ	9,000	11,500	12,000	14,000	Ներառում է վերնաշապիկ
12կմ	7,000	8,500	10,000	11,000	Ներառում է վերնաշապիկ
5կմ	5,000	6,000	7,000	8,000	Ներառում է վերնաշապիկ
1կմ մանկական վազք	4,000	5,000	6,000	7,000	Ներառում է վերնաշապիկ

- Գրանցման տեղերը սահմանափակ են, գրանցումը բաց է տեղերի առկայության դեպքում:

- Տարեց մասնակիցները (65 տարեկան և ավելի մեծ) կարող են գրանցվել 50% զեղչով, տեղերի առկայության դեպքում: Գրանցման համար անհրաժեշտ է գրել info@armeniamarathon.org էլ. հասցեին:
- ՀՀ բանակի զինծառայողները, որոնք մասնակցել են 2020 44-օրյա պատերազմին կարող են մասնակցել անվճար: Գրանցման համար անհրաժեշտ է գրել info@armeniamarathon.org էլ. հասցեին:
- 5կմ, 12կմ, 21կմ և 42կմ վազքի մասնակցության վճարը չի ներառում մրցութային վերնաշապիկի վճարը: Ցանկության դեպքում մասնակիցները կարող են գնել շապիկը հավելավճարով:
- Մասնակցության կանխիկ վճարումը հնարավոր է իրականացնել Կոնվերսբանկի մասնաճյուղերում` օգտագործելով հետևյալ ռեկվիզիտները:

Կազմակերպության անվանումը - "ԱՐՄ ՄԱՐԱԹՈՆ" ՀԻՄՆԱԴՐԱՄ
Բանկային հաշիվ - 1930067640570100
Բանկ - "Կոնվերսբանկ"ՓԲԸ
Նպատակը - Երևանի Մարաթոնի մասնակցության վճար, ԱՆՈՒՆ, ՄՐՑԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Բանկի մասնաճյուղում կանխիկ վճարման դեպքում մասնակցին անհրաժեշտ է Էլեկտրոնային փոստով info@armeniamarathon.org հասցեին ուղարկել վճարման կտրոնի լուսանկարը:
- Վճարման գումարի դիմաց մասնակցին տրամադրվում են հետևյալ ծառայությունները` մեկնարկային համար, ժամանակաչափ, ավարտի մեդալ, եզրափակիչ արձանագրության արդյունքներ, ջրի և սննդի կայաններից օգտվելու հնարավորություն, համերգային ծրագիր, Էլեկտրոնային վկայական, անհրաժեշտության դեպքում առաջին օգնություն ստանալու հնարավորություն:
- Ոչ կազմակերպիչների մեղքով մրցությունը չկայանալու դեպքում մասնակցության վճարը չի վերադարձվում:
- Մասնակցի որոշմամբ չմասնակցելու դեպքում մասնակցության վճարը վերադարձի ենթակա չէ:

9. Մեկնարկային փաթեթների տրամադրում

- Մեկնարկային փաթեթները տրամադրվելու են 2024թ ապրիլի 27-ին: Փաթեթը ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ:

10. Առաջին օգնություն

- Առաջին օգնություն հասանելի է մեկնարկ / ավարտ հատվածում, ինչպես նաև 5կմ և 12կմ, 24կմ, 36կմ կետերում տեղակայված բուժկետերում: Մեկնարկային հատվածում հերթապահում են բուժաշխատակիցներ: Վազքուղում վտանգված մարդ տեսնելիս անհապաղ պետք է հաղորդել բուժաշխատողներին կամ կազմակերպիչներին:

11. Վազքը չավարտելու դեպքում

- Եթե մասնակիցը որոշել է չչարունակել մրցությունը, ապա պետք է տեղեկացնել այդ մասին մոտակա կազմակերպչին կամ կամավորներին: Բուժաշխատակիցները և մարտնի կամակերպիչներն կարող են որոշում կայացնել մասնակցին հանել վազքուղուց , եթե գտնեն դրա անհրաժեշտությունը:

12. Դոպինգային վերահսկողություն

- Մարաթոնի կազմակերպչական թիմն իրավունք ունի դոպինգային ստուգում իրականացնել մրցութային մրցատարածության մասնակիցների առաջին, երկրորդ և երրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների շրջանում, բացառությամբ՝ 1 կմ մանկական վազքի: Բոլոր հաղթողները պետք է պատրաստ լինեն դոպինգային հնարավոր ստուգման: Հաղթող մասնակիցն իրավունք ունի հրաժարվելու մասնակցել դոպինգային ստուգմանը, բայց այս պարագայում նա որակագրկվում է որպես հաղթող և կորցնում է համապատասխան դրամական մրցանական ստանալու իրավունքից:
- Վերջնական ավարտական արձանագրությունները հասանելի են դառնում միայն դոպինգ վերահսկողության արդյունքներից հետո: Դոպինգային ստուգման թեստերն իրականացվում են անկախ, միջազգայնորեն հավատարմագրված գործակալությունների միջոցով: Բոլոր այն վազորդները, ում դոպինգային ստուգման արդյունքը դրական կլինի, ավտոմատ կերպով որակագրկվում են որպես հաղթող և կորցնում են համապատասխան դրամական մրցանական ստանալու իրավունքից: Հաղթող կհամարվի հաջորդ մասնակիցն ըստ եզրափակիչ արձանագրության. նա նաև ստանձնի տվյալ ստատուսից բխող բոլոր պարտականություններ ու առավելությունները՝ ներառյալ մրցանակը:

13. Որակագրկում

- Վազքի կազմակերպիչները կարող են որակագրկել այն մասնակիցներին, որոնք չեն անցել հակադոպինգային ստուգումը, խախտում են մրցության կանոնները, խանգարում մնացած մասնակիցներին, այլ կերպ խաթարում մրցության ընթացքը:

14. Ժամանակաչափ

- Մասնակիցների վազքի արդյունքների ճշգրիտ չափումը իրականացվում միջազգային մակարդակի ժամանակաչափ համակարգի օգնությամբ: Յուրաքանչյուր մասնակցի տրվում է անհատական չիփ: Վազքատարածքն անցնելուց հետո, բոլոր մասնակիցների համար որոշվում է իրենց զուտ (մեկնարկային կետից մինչև ավարտի կետը հատելու) ժամանակը:

15. Պարգևատրություն

- Բացարձակ առաջնությունում հաղթող երեք մասնակիցները կանանց և տղամարդկանց մեջ որոշվում են եզրագիծը հատելու փաստի հիման վրա (gun time), վազքուղու վրա ժամանակաչափի օգնությամբ գրանցվող բոլոր կետերը անցնելու դեպքում:
- 42,2կմ, 21.1կմ, 12կմ, 5կմ և 1կմ վազքատարածքների բացարձակ առաջնության հաղթողները պարգևատրվում են գավաթներով:
- Մրցութային կազմակերպիչները կարող են որոշում կայացնել վազքի հաղթողներին դրամական պարգև տրամադրել վերաբերյալ (բացի մանկական վազքից): Դրամական պարգևները վճարվում են հաղթողներին բանկային հաշվի վրա Էլեկտրոնային փոխանցման միջոցով: Հաղթող մասնակիցը պետք է տրամադրի կազմակերպիչներին անձնագրային տվյալներ, հավաստի կոնտակտային և բանկային հաշվի տվյալներ: Նշված տեղեկությունները մինչև 2024թ մայիսի 30-ը չտրամադրելու դեպքում մասնակիցը գրկվում է հաղթողին դրամական մրցանակը ստանալու իրավունքից: Վճարվող դրամական պարգևը նվազեցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված եկամտահարկի չափով:
- Տարիքային խմբերում պարգևատրումը կատարվում է՝ ելնելով ժամանակային զուտ արդյունքից, հաշվարկվում է մեկնարկային և վերջնակետային ժամանակը:
- Տարիքային խմբերը ներառում են հետևյալ խմբերը 13-18 (5կմ), 16-18 (12կմ), 18-24; 25-29, 30-34; 35-39, 40-44; 45-49, 50-54; 55-59; 60+ մրցանակակիրները 42.2կմ, 21.1կմ, 12կմ և 5 կմ վազքատարածություններում ստանում են պատվոգրեր:
- Եզրագծին հասած բոլոր մասնակիցները ստանում են հիշարժան մեդալներ:
- Հաղթանակածների մրցանակաբաշխությանը չներկայանալու դեպքում կազմակերպիչները կարող են ինքնուրույն տնօրինել պարգևները:

16. Լուսանկարում

- Կազմակերպիչները կարող են օգտագործել մրցավազքի ժամանակ արված լուսանկարները՝ ըստ իրենց հայեցողության:

17. Բողոքարկումներ

- Մրցավազքի արդյունքների շուրջ բոլոր բողոքարկումները , վազքատարածքում կատարված բոլոր խախտումները գրավոր տեսքով ներկայացվում են մրցավազքի գլխավոր դատավորին, կամ ուղարկվում info@armeniamarathon.org էլ. հասցեով մինչև 2024թ մայիսի 7-ը:

18. Առողջական վիճակի վերաբերյալ հարցեր

- Մասնակիցները ստորագրում են համաձայնագիր, ըստ որի կազմակերպիչներն ամբողջապես զերծ են մնում մրցավազքի ժամանակ մասնակցի առողջությանը հասցված հնարավոր վնասի պատասխանատվությունից:

19. Անձնական տվյալների օգտագործում

- Երբ վազորդները լրացնում են գրանցման հայտը, իրենք համաձայնում են տրամադրել անձնական տվյալները վազքի կազմակերպիչներին: Վերջիններս կարող են այդ տվյալները կիրառել մասնակիցների ցանկ կազմելու, մրցույթի հաղթողների արձագրության և տվյալների ընդհանրացված վիճակագրության ներկայացման ժամանակ: Անձնական տվյալները կարող են տրամադրվել երրորդ կողմին այն պարագայում, երբ վերջինս ունի համապատասխան պայմանագիր «Արմ Մարաթոն» հիմնադրամի հետ և պարտավորվում է պահպանել տվյալների գաղտնիությունը: Երրորդ կողմի ներկայացուցիչները կարող են օգտագործել անձնական տվյալները հետևյալ դեպքերում՝ Երևան Մարաթոնի կամ այլ մրցույթների մասին տեղեկատվական էլ. նամակներ և sms հաղորդագրություններ ուղարկելու, վերջնական արձանագրության և ժամանակաչափ սարքերի գործառման. ընդհանրացված վիճակագրության համար: Այս պարագայում կարող են կիրառվել հետևյալ տիպի անձնական տվյալներ՝ անուն, ազգանուն, ծննդյան տարեթիվ, երկիր, սեռ, հեռախոսահամար, էլ. հասցե, մրցույթի արդյունք: Վազքի ավարտին ներկայացվող հանրայնացվող արձանագրությունը պարունակելու է մասնակցի անունը, ազգանունը, երկիրը, սեռը, տարիքային խումբը ու մրցույթի արդյունքը: